

Աղուէսն ու կռունկը

(առակ)



Աղուէսն ու կռունկը դրացիներ էին: Անգամ մը աղուէսը ուզեց հիւրասիրել¹ կռունկը:


- Սիրելի՛ դրացի, գոնէ անգամ մը այցելէիր ինձի,- ըսաւ աղուէսը:- Քեզի համար համով ուտելիքներ եփած եմ:

Եւ կռունկը հիւր եկաւ իր բարեկամին: Սակայն աղուէսը շիլա² եփած էր և լեցուցած՝ տափակ ափսէի³ մը մէջ: Ճաշը մօտեցուց հիւրին և քաղցր խօսքերով դարձաւ իրեն.

- Կե՛ր, սիրելի կռունկ, ե՛ս պատրաստած եմ:

Կռունկն իր երկար կտուցով կտցեց ափսէն, բայց ոչինչ կրցաւ ուտել: Իսկ աղուէսը լիզելով կերաւ ամբողջ շիլան ու ըսաւ.

- Ափսո՛ս, որ ուրիշ բանով չեմ կրնար քեզ հիւրասիրել:



- Շատ շնորհակալ եմ կերածիս համար: Հիմա ալ դուն հիւր եկուր ինձի:

Յաջորդ օրը աղուէսը հիւր գնաց կռունկին: Կռունկը ապուր եփած էր, լեցուցած՝ երկար վիզով սափորի⁴ մը մէջ ու դրած՝ սեղանին:

- Կէր,- ըսաւ աղուէսին,- շատ համով է:

Անօթեցած աղուէսը կը դառնար ապուրին շուրջը, կը հոտոտար ու կը լիզէր սափորի շրթները: Բայց բերանը չէր հասներ ապուրին:

Կռունկն իր երկար կտուցը մտցուց սափորին մէջ և կերաւ ամբողջ ապուրը:

Աղուէսը կը կարծէր, թէ ամբողջ շաբաթ քէֆ կ'ընէ կռունկի հաշուին:

Բայց ստիպուած էր անօթի փորով վերադառնալ: Ի՞նչ կրնար ընել. ձգեց ու հեռացաւ անտառին խորքը:

Այդ օրէն ետք աղուէսին ու կռունկին բարեկամութիւնը վերջացաւ:

«Ինչ որ ցանես, այն կը հնձես»:

